ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵՍՏ

ՄԱՍ I (A)

A1. Ինդուստրիալ հասարակությունում ի տարբերություն ավանդականի
1. Գերակշռում է զարգացման էքստենսիվ ուղին
2. Մարդկանց մեծ մասը զբաղված է գյուղատնտեսությունում
3. Մարդկանց մեծ մասը զբաղված է արդյունաբերությունում
4. Անհատը ամբողջությամբ ենթարկված է կոլեկտիվին

A2. Ակտիվ սոցիալական կապերի մեջ մարդու ներառվածությունը արտացոլում է այս հասկացությունը
1. անձ
2. անհատ
3. անհատականություն
4. քաղաքացի

A3. Ոչ ստանդարտ, ոչ կաղապարված գործողությունը առաջին հերթին բնորոշ է
1. խաղին
2. ստեղծագործությանը
3. աշխատանքին
4. հաղորդակցմանը

A4. Որ պարտադիր պայմանի առկայության դեպքում է գործում շուկայական տնտեսության համակարգը:
1. Գործազրկության ցածր մակարդակի պայմաններում
2. Սպառողական բարձր պահանջարկի այմաններում,
3. Արտադրության մեջ գիտատեխնիկական ձեռքբերումների ներդրման պայմաններում
4. Մասնավոր սեփականության գերակայության պայմաններում

A5. Բջջային կապի բացվող սրահը հայտարարառում է գլխավոր ինժենների ազատ հաստիքի համար մրցույթի պայմանները: Որ շուկայի գործունեության օրինակ է սա:
1. տեղեկատվական
2. աշխատանքի
3. բարիքների և ծառայությունների
4. կապիտալի

A6. Բաժնետոմսի սեփականատիրոջ կողմից ստացվող եկամուտը կոչվում է
1. շահույթ
2. կապիտալ

3. ռենտա
4. դիվիդենդ

A7. Հանրահայտ փիլիսոփա Ն. Կուզանացին ծնվել է ձկնորսի ընտանիքում, բայց հետագայում դարձել է վանական, կրթություն է ստացել և ձեռք է բերել ավելի հեղինակավոր կարգավիճակ: Ո՞ր սոցիալական երևույթն է ներկայացնում այս պատմական օրինակը.

1. սոցիալական անհավասարություն
2. սոցիալական մոբիլություն
3. սոցիալահան հաղորդակցում
4. սոցիալական շարժում

A8. Այս տեսակի ընտանիքում համատեղ ապրում են միայն ծնողները և նրանց զավակները

1. ավանդական ընտանիք
2. գործընկերային ընտանիք
3. ընդլայնված ընտանիք
4. նուկլեար ընտանիք

A9. Սոցիալական աստիճանակարգի «հատակում» գտվող անձանց անվանում են

1. մարգինալներ
2. լյումպեններ
3. էթնիկ փոքրամասնություններ
4. կաստաներ

A10. Ի՞նչն է համարվում քաղաքացիական հասարակության գործառնման անհրաժեշտ պայման

1. իրավական պետությունը
2. աշխարհիկ պետությունը
3. պետական մարմինների ներդաշնակ գործունեությունը
4. ուժեղ քաղաքական առաջնորդի առկայությունը

A11. Քաղաքացիական հասարակության և պետության միջև միջնորդի դեր է կատարում

1. քաղաքական կուսակցությունը
2. բանակը
3. ոստիկանությունը
4. պետական ապարատը

A12. Պետության հատկանիշ, որը տարբերակում է այն մարդկանց միավորումների բոլոր այլ ձևերից

1. իրավունքի համակարգի առկայություն
2. միասնական տնտեսության առկայություն
3. կառավարող մարմինների առկայություն
4. ընդհանուր արժեքների առկայություն

A13. Իրավական պատասխանատվության նպատակը
1. իրավախախտի վերադաստիարակությունն է
2. իրավախախտի պատիժն է
3. ապագայում օրինախախտ գործողությունների կանխումն է
4. բոլոր վերը նշվածներն են

A14. Քաղաքացիական իրավունքների նորմերը կիրառվում են
1. արտոնագիր /պատենտ/ ձեռք բերելուց
2. ներկայացուցչական մարմինների ընտրությունների ժամանակ
3. բնապահպանական իրավախախտումների ժամանակ
4. աշխատանքային վեճերի որոշման ժամանակ

A15. Պարտադիր վարքի կանոն, որը հաստատված է պետության կողմից և ամրագրված է նորմատիվ իրավական ակտերի մեջ» սահմանումը վերաբերում է
1. իրավունքի նորմին
2. իրավունքի ճյուղին
3. բարոյական նորմին
4.իրավական ինստիտուտին

A16. Լրացրեք բաց թողնված բառը

Բանական ճանաչողության ձևեր

Հասկացություն		Դատողություն		...

Պատասխան _____.

A17. Գտեք այն հասկացությունը, որը ընդհանրացնող է մնացածի համար: Պատասխանում նշել նրա թիվը:
1. ձեռներեցներ
2. գործազուրկներ
3. զբաղվածներ
4. աշխատունակ բնակչություն
5. վարձու աշխատողներ

A18. Գտեք այն հասկացությունը, որը ընդհանրացնող է մնացածի համար: Պատասխանում նշել նրա թիվը:

1) տուգանք
2) նկատողություն
3) իրավական պատասխանատվություն
4) որակազրկում
5) գույքի բռնագրավում

A19. Ստորև բերված է քաղաքական կուսակցությունների ցանկը: Դրանք բոլորը, բացառությամբ երկուսի ձևավորված են գաղափարախոսական սկզբունքով: Գտեք այդ երկու տերմինները, նշեք պատասխանում դրանց թվերը:

1. ազատականներ
2. պահպանողականներ
3. կենտրոնամետներ
4. սոցիալ-դեմոկրատներ
5. կոմունիստներ
6. արմատականներ

A20. Նշված տերմինները, բացառությամբ երկուսի, վերաբերում են «իրավահարաբերություն» հասկացությանը: Գտեք այն երկու տերմինները, որոնք վերաբերում են այլ հասկացության: Նշեք պատասխանում դրանց թվերը:

1. քաղաքացիական
2. վարչական
3. ընտանեկան
4. աշխատանքային
5. մարզական
6. բարոյական

ՄԱՍ II (B)

B1. Նշեք սահմանադրական միապետության տարբերակող բնութագիրները

1) պետության ներկայացուցչական գլուխը միապետն է
2) բարձրագույն դատական իշխանությունը իրականացնում է միապետը
3) օրենսդիր իշխանությունը իրականացնում է խորհրդարանը
4) գործադիր իշխանությունը պատկանում է կառավարությանը
5) ներկայացուցչական գործառույթները իրականացնում է խորհրդարանի վերին պալատի նախագահը

B2. . Տրված ցուցակում գտե՛ք շուկայական տնտեսությանը բնորոշ հատկանիշները

1. Արտադրության պետական վերահսկում
2. Ազատ գնագոյացում
3. Արտադրողների տնտեսական ազատություն
4. Պետական սեփականության գերակշռում
5. Տնտեսության կենտրոնացված պլանավորում
6. Ոչ շահութաբեր ձեռնարկությունների սնանկացում

B3. Ներքևում տրված շարքից որոնք են ներկայացնում զգայական ժանաչողության ձևերը

1. զգայություն
2. ընկալում
3. դատողություն
4. հասկացություն
5. մտապատկեր
6. մտահանգում

B4. Տուրիստական գործակալության աշխատակցուհին մշտական ուշանում է աշխատանքային օրվա սկզբին: Գործակալության տնօրենն բազում անգամ նրան զգուշացրել էր նման վարքի անթույլատրելիության մասին, սակայն նա շառունակում էր ուշանալ: Ներքևում բերված տարբերակներից ընտրեք այն դիրքորոշումները, որոնք կապված են տվյալ իրավիճակի իրավական գնահատականի հետ և պատասխանում նշեք համապատասխան թվերը:

1. աշխատանքային իրավունք
2. քաղաքացիական-իրավական պատասխանատվություն
3. կարգապահական զանցանք
4. վարչական իրավունք
5. աշխատանքից ազատում
6. նյութական պատասխանատվություն

B5. Որոշեք իրավահարաբերությունների և դրանց կարգավորող իրավունքի ճյուղերի համապատասխանությունը

ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃՅՈՒՂԵՐ
Ա) կնքվել է գործարքի պայմանագիր	1) քաղաքացիական իրավունք
Բ) ընդունվել են Սահմանադրության փոփոխություններ	2) սահմանադրական իրավունք
Գ) ստորագրվել է կոլեկտիվ պայմանագիր	
Դ) քաղաքացին ընդունեց ժառանգման	

իրավունքները
Ե) նախագահը ստորագրեց համաներման հրամանագիրը

3) աշխատանքային իրավունք

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

Ա	Բ	Գ	Դ	Ե

B6. Որոշեք սանկցիաների կոնկրետ դրսևորման և դրանց տեսակների համապատասխանությունը.

ՍԱՆԿՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ
Ա) անբարեհամբույր վերաբերմունք
Բ) տուգանք
Գ) պաշտոնական նկատողություն
Դ) բոյկոտ
Ե) հրաժարում համագործակցությունից

ՍԱՆԿՑԻԱՅԻ ՏԵՍԱԿԸ
1) ֆորմալ բացասական սանկցիա
2) ոչ ֆորմալ բացասական սանկցիա

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

Ա	Բ	Գ	Դ	Ե

B7. Գտե՛ք տնտեսական բնութագրերի և տնտեսական համակարգերի համապատասխանությունը. առաջին սյունակում տրված ամեն հասկացության համար ընտրե՛ք համապատասխան հասկացություն եկրորդ սյունակից:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Ա) սեփականության տեսակների բազմազանություն
Բ) պետության կողմից արտադրության և բաշխման վերահսկում
Գ) առաջարկի և պահանջարկի օրենքի ազդեցություն
Դ) կենտրոնացված գնագոյացում
Ե) արտադրողների տնտեսական անկախություն

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ
1. Վարչա-հրամայական
2. Շուկայական

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

Ա	Բ	Գ	Դ	Ե

B8. Համապատասխանեցրեք մտածողության ձևերը և նրանց համառոտ նկարագիրը

ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ	ՆԿԱՐԱԳԻՐ
Ա)վերլուծություն	1) առարկաների նմանությունների և տարբերությունների հաստատում
Բ)սինթեզ /համադրում/	2) մտովի առարկայի մասնատում նրա բաղկացուցիչ մասերի
Գ)համեմատություն	3) մտքի ձև, որում հասկացությունների կապի միջոցով հաստատվում է կամ ժխտվում է ինչ-որ բան այլ բանի մասին
Դ)հասկացություն	4) մտածողության գործընթաց, որը թույլ է տալիս մեկ կամ երկու դատողությունից դուրս բերել նոր դատողություն
Ե)դատողություն	5) միտք,որն արտացոլում է առարկաների ընդհանուր և էական հատկանիշները
Զ)մտահանգում	6) վերլուծությամբ մասնատված մասերի մտովի միացումը մեկ ամբողջի մեջ

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ

B9. Գտե՛ք հասարակական հարաբերությունների առանձնահատկությունների և ստրատիֆիկացիայի տեսակի միջև եղած համապատասխանությունը: Առաջին սյունակի ամեն սահմանման համար ընտրեք համապատասխան հասկացություն երկրորդ սյունակից

Հասարակական հարաբերությունների առանձնահատկություններ
ստրատիֆիկացիաի տեսակ

Ա. իրավունքների և պարտականություններ իրավաբանական ամրագում
հիմնական սոցիալական նորմերի տեսքով
Բ. վերին խավին պատկանելիությունը գերազանցապես ժառանգական բնույթ ունի
Գ. մեկ սոցիալական խմբից մյուսին անցումն արգելված է
Դ. խմբերի բաժանման հիմքում հիմնականում ընկած են աշխատանքի բնույթի, վճարման չափի և ձևի տարբերությունները
Ե. այլ խմբերի անդամների հետ ամուսնությունների արգելք

1.կաստայական
2. խավային
3. դասակարգային

Ընտրված թվերը գրել համապատասխան տառերի տակ

Ա	Բ	Գ	Դ	Ե

B10. Գծապատկերում ներկայացված է իրավիճակ հեղուկ գազի շուկայում՝ պահանջարկի գիծը /S/ տեղափոխվել է նոր դիրք /S1/:



Գծապատկերում P՝ գինն է, իսկ Q՝ քանակը:
Վերլուծեք և բացատրեք, որ գործոններով է պայմանավորված պահանջարկի փոփոխությունը:

1. Ներմուծման մաքսային վճարների բարձրացմամբ
2. Սպառողների հիմնական զանգվածի եկամուտների աճով
3. Սպառողների հիմնական զանգվածի եկամուտների նվազումով
4. Բենզինի գների աճով
5. Էլեկտրական շարժիչով մեքենաների քանակի աճով